ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ № 6, 1950 Биол. и сельхоз. науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ռ. Բ. Դարբինյան

ԷՎՈԼՈՒՑԻՈՆ ՊԱԼԵՈՆՏՈԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՆԱԴԻՐ ՎԼԱԴԻՄԻՐ ՕՆՈՒՖՐԻԵՎԻՉ ԿՈՎԱԼԵՎՍԿԻ

ՍՍՌՄ-ի Գիտությունների Ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսան հետաքրքրական և արժեքավոր նյութեր[1] ռուս այն բիոլոգ-պալեոնտոլոգի մասին, որին մինչսովետական ժամանակաշրջանում միայն սահմանափակ գիտական շրջանները գիտեին։ Վ. Կովալևսկին մինչև օրերին չէր ստացել իր արժանի գնահատականը և չէր ճանաչվում պաշտոնական գիտության կողմից ցարական Ռուսաստանում։

Վլադիմիր Կովալևսկին ամենայն իրավամբ ճանաչված է գիտության կողմից որպես էվոլուցիոն պալեոնտոլոգիայի հիմնադիր։ Նույնպիսի հոչակ ուներ նաև նրա եղբայր՝ Ալեքսանդր Օնուֆրիևիչը, որի նշանավոր կենդանաբանական-սաղմաբանական հետազոտությունները մինչև օրս էլ խոշորագույն ներդրումներ են հանդիսանում էվոլուցիոն ուսմունքի դանձարանում։

Լենինի անվան Համամիութենական Գյուղատնտեսական Գիտությունների Ակադեմիայի 1948 թվականի օգոստոսյան սեսիայում խոշորագույն բիոլոգ Տ. Դ. Լիսենկոն իր զեկուցման մեջ հիշատակելով Վ. Օ. Կովալևսկուն, դրեց նրան այն ականավոր ռուս բիոլոգ-դարվինիստների շարքին, որոնք ջերմ պաշտպանում և զարգացնում էին դարվինիզմը։

Եղբայրներ Վ. Օ. և Ա. Օ. Կովալևսկիները 60—70-ական թվականներին առաջավոր ռուս այն գիտնականներից էին, որոնք դուրս էին եկել դեմոկրատական ինտելիգենցիայի շարքերից, կրել ականավոր ռևոլուցիոն-դեմոկրատական գործիչների՝ Ն. Գ. Չերնիշևսկու, Ն. Ա. Դոբրոլյուբովի, Դ. Ի. Պիսարևի, Ա. Ի. Գերցենի, Ի. Մ. Սեչենովի աղդեցությունը։ Վ. Կովալևսկու մատերիալիստական-աթեիստական աշխարհայացքը ձևակերպվել է վերոհիշյալ գործիչների մատերիալիզմով հագեցած փիլիսոփայական աշխատությունների ազդեցության տակ։ Անմիջական շփում ունենալով ժամանակակից նշանավոր գործիչների հետ, բնականաբար Վ. Կովալևսկին չէր կարող հեռու մնալ ռևոլուցիոն-դեմոկրատական շարժման դաղափարներից։

Երկու եղբայրներն էլ, տարվելով ժամանակի ընդհանուր ձգտումով դեպի մատերիալիստական բնագիտությունը, փոխեցին իրենց սկզբնական մասնագիտությունը. Ալեքսանդր Օնուֆրիևիչը՝ ինժեներական, Վլադիմիր Օնուֆրի-

---

[1] Л. Т. Давиташвили—В. О. Ковалевский. 1946.

Научное наследство—1948. том I. стр. 187—423 (В. О. и А. О. Ковалевские).

В. О. Ковалевский—Палеонтология лошадей. 1948.

նիչը՝ իրավագիտական, շրջվելով դեպի բնական գիտությունները, և դարձան համաշխարհային մասշտաբի էվոլուցիոնիստ բիոլոգ-ընագետներ։

Մեր ակնարկում մենք կանգ կառնենք Վ. Օ. Կովալևսկու վերաբերյալ լույս տեսած սովետական նշանավոր պալեոնտոլոգ Լ. Շ. Դավիտաշվիլու կազմած կենսագրական մոնոգրաֆիայի՝ «Գիտական ժառանգություն» ժողովածուի մեջ զետեղված՝ Վ. Կովալևսկու նամակների, ապա նրա «Զիների պալեոնտոլոգիան» կլասիկ աշխատության վրա։

Նշված նյութերը բավական մանրամասն ծանոթացնում են ընթերցողին խոշորագույն այն բիոլոգ-պալեոնտոլոգին, որը, օժտված լինելով արտասովոր ընդունակություններով, կարողացավ ուղղակի մի քանի տարվա ընթացքում հաղթահարել բազմաթիվ բնագիտական դիսցիպլիններ, թեքվել բնագիտության բնագավառը, կազմակերպվել որպես իսկական բնագետ, ապա համաշխարհային դիրք գրավել պալեոնտոլոգիայում։ Նա հեղաշրջեց այդ բիոլոգիական գիտությունը, փոխեց նրա բարացած հին դրույթները և դրեց նոր, մատերիալիստական էվոլուցիոնիստական դիրքերի վրա։ Նա պալեոնտոլոգիան դարձրեց դարվինիզմի ուժեղ և խիստ կարևոր հիմնաքարերից մեկը։

Հիշյալ նյութերում մանրամասնորեն դրսևորված է Վլադիմիր Կովալևսկու կյանքը տարբեր էտապներում։

Լ. Շ. Դավիտաշվիլու մոնոգրաֆիկ կենսագրական աշխատությունը շոշափում է Լ. Կովալևսկու կյանքը և գիտական գործունեությունը բազմաթիվ նամակների հիման վրա։ Երկրորդ դրքում («Գիտական ժառանգություն») Վ. Կովալևսկու չափազանց հետաքրքրական, բովանդակալից նամակներն են՝ գրած իր եղբորը, որոնք ցայտուն կերպով պատկերում են նշանավոր ռուս գիտնականի կյանքը, անձնական ապրումները և իրազարձությունները՝ ընտանեկան, գիտական ասպարեզում, նրա հարաբերությունները մոնրիմների, նշանավոր գիտնականների հետ իր կյանքի տարբեր շրջաններում։ Երրորդ դիրքը—Վ. Կովալևսկու երկու հիմնական գիտական աշխատություններն են։ Երկու վերջին նյութերին կցված են Լ. Շ. Դավիտաշվիլու ընդարձակ ակնարկները Վ. Կովալևսկու կյանքի, գործունեության, աշխատությունների մասին։

Լ. Շ. Դավիտաշվիլին իր գրքում շատ ընդարձակ մեջբերումներ անելով Վ. Օ. Կովալևսկու նամակներից, տալիս է նրա կյանքի ու գործունեության մանրամասն բնութագիրը։ Պատկերում է մեր առաջ Վ. Կովալևսկու մանկությունը, պատանեկությունը, մասնագիտական շրջադարձը, ընտանեկան կյանքի ուշագրավ դեպքերը, գիտական աճը, հրատարակչական և գիտական գործունեությունը, հանդիպած դժվարությունները, ապա և ողբալի վաղաժամ վախճանը ցարական Ռուսաստանի անբարենպաստ ծանր պայմաններում։

Գրքի առաջին գլուխը բնութագրում է Վ. Կովալևսկուն նշանավոր համաշխարհային գիտնականների գնահատությամբ, 2—7-րդ գլուխները տալիս են ուսուցման տարիները Պետերբուրգում, գիտական հրատարակչության ձեռնարկումը, կյանքը և աշխատանքը արտասահմանի համալսարանական քաղաքներում, հարաբերությունները, հանդիպումները գիտնականների հետ, մանավանդ Չարլզ Դարվինի հետ, 8—12-րդ գլուխները շոշափում են գիտական գործունեությունը պալեոնտոլոգիայի և գեոլոգիայի, բիոստրատիգրաֆիայի բնագավառում, 13—15-րդ գլուխները նվիրված են կյանքի վերջին տարիներին, հարաբերություններին գիտնական-ընկերակիցների հետ։ Վերջում բերված է Վ. Կովալևսկու աշխատությունների ցուցակ, ապա և հետաքրքրական մի

ցուցակ այն գիտական աշխատությունների և ձեռնարկների, որոնց թարգմանությունները հրատարակվել են Վ. Կովալևսկու կողմից։ Գրքին կցված են մի քանի գծանկարների նմուշներ Վ. Կովալևսկու աշխատությունից։

Խիստ արժեքավոր գործ է կատարել Լ. Շ. Դավիտաշվիլին ամենայն բարեխղճությամբ և մեծ սիրով երևան հանելով մեծ ռուս գիտնականի հարուստ և ուշագրավ կյանքը և գործունեությունը, դրսևորելով նրան որպես մարդ, գիտնական և հասարակական գործիչ։

Վ. Օ. Կովալևսկու ըմբռնող, անհանգիստ, միշտ շարժուն ոգին մշակվել է ռևոլյուցիոն-դեմոկրատական գործիչների շրջապատում՝ Պետերբուրգում։ Նա ծնվել է 1842 թվին. 12 տարեկան հասակից սովորում էր իրավագիտության դպրոցում։ Ընտանեկան նյութական դժվարություններից դրդված 16 տարեկանից սկսում է զբաղվել թարգմանություններով։ Վաղ երիտասարդության օրոք վերջին դասարանի դպրոցական Վլադիմիր Օնուֆրիևիչը որոշ հարաբերություններ մեջ էր ռևոլյուցիոն ինտելիգենցիայի խմբակների հետ։ Հետագայում էլ, թեև ակտիվ չէր մասնակցում ռևոլյուցիոն խմբակներում, բայց մեծ չափով աջակցում էր նրանց գործին։ 1861 թվականին դպրոցն ավարտելով գնում է արտասահման— Հայդելբերգ, Փարիզ, Նիցցա, ապա Լոնդոն, որտեղ զբաղվում է իրավագիտության ուսումնասիրությամբ։ Բայց նա տրամադրված չէր իրավաբան լինելու։ Եղբորը գրած նամակներից երևում է, թե ինչպես հետզհետե նա հակվում է դեպի բնագիտությունը։ Այդ ժամանակ որոշ չափով նպաստեց և նրա ձեռնարկած գիտական հրատարակչական գործը։ 1863 թվականին վերադառնալով Պետերբուրգ, նա շարունակում է թարգմանական աշխատանքները, և արդեն ինքն է կազմակերպում հրատարակությունը։ Բավական է նայել նրա հրատարակած գրքերի ցուցակը, որպեսզի համոզվենք, որ նա շահադիտական նպատակներով չէ, որ ձեռնարկել էր խիստ արժեքավոր և դժվարին գործը։ Համարյա բոլոր հիմնական բնագիտական դիսցիպլինները ներկայացված են այստեղ։ Հրատարակված են կլասիկ գիտական և պոպուլյար արժեքավոր գրքեր, ձեռնարկներ՝ ֆիզիկայից, քիմիայից, աստղաբաշխությունից, բիոլոգիայից, կենդանաբանությունից, համեմատական անատոմիայից, հիստոլոգիայից, ֆիզիոլոգիայից, բուսաբանությունից, բժշկական, անտրոպոլոգիական, սոցիոլոգիայի, պատմական, փիլիսոփայական նյութեր։ Հրատարակեց նաև Ա. Գերցենի՝ «Ո՞վ է մեղավորը» նշանավոր գիրքը (1866 թ.)։ Հրատարակում է Բրեմի՝ «Կենդանիների կյանքը» հանրամատչելի աշխատությունը պրակներով, ապա և անմիջական կապ հաստատելով Դարվինի հետ, հրատարակում է նրա երկու աշխատություններ[1]։ Նյութերի թարգմանության և խմբագրության գործին մասնակցում էր և ինքը Վլադիմիր Կովալևսկին, որը ազատ տիրապետում էր չորս օտար լեզուների, զբաղվում է այդ գործին նաև սկսնավոր ռուս գիտնականների և գործիչների (Ի. Մ. Սեչենովին, Ա. Գերդին և ուրիշներին)։ Քիչ հոգսեր և նյութական զրկանքներ չէր պատճառում իրեն համար անշահավետ այդ խիստ արժեքավոր, հասարակական գործը, միևնույն ժամանակ իր հրատարակած գրքերը, մանավանդ բնագիտական, յուրօրինակ համալսարան ծառայեցին նրա համար և քիչ չնպաստեցին նրա լուրջ բնագիտական կրթությանը։

[1] Дарвин Ч.—Происхождение видов. Отдел. I. Изменения животных и растений вследствие приручения. Пет. т. I, 1867, т. II. 1868. Дарвин Ч.—О выражении ощущений у человека и животных. Пет. 1872.

Ռևոլուցիոն-դեմոկրատական, առաջավոր ռուս գործիչների շրջապատում կռվում, կոփվում էր մատերիալիստ-աթեիստ Վ. Կովալևսկին։

Լոնդոնում եղած ժամանակ նա լինում էր Ա. Գերցենի մոտ։ Դեռ 1863 թվականին Վ. Կովալևսկին մասնակցում է լեհական ապստամբությանը, իսկ 1866 թվին նրան տեսնում ենք Իտալիայում Գարիբալդիի գլխավորած ազատագրական բանակում (Գարիբալդիի գլխավոր շտաբում, նրա անմիջական օգնականների թվում)։ Լ. Շ. Դավիտաշվիլու ասելով, այդ էպիզոդիկ դեպքը Վ. Կովալևսկին նկարագրում է՝ „С Петербургские Ведомости" թերթում 1866 թ., № 7—8)։

Վ. Կովալևսկու մտերիմ ընկերներից շատերը ռևոլուցիոն գործիչներ էին, նրանց պայքարը ժողովրդի ազատագրման համար ոգեշնչում էր նաև Վ. Կովալևսկուն, որը, թեև անմիջականորեն չէր մասնակցում ռևոլուցիոն շարժմանը, բայց մեծ չափով աջակցում էր այդ գործին։ Վ. Կովալևսկու կյանքի այս էջը դեռ լավ ուսումնասիրված չէ, նոր կենսագրական նյութերը թերևս լույս սփռեն այս հետաքրքրական կողմի վրա։

Եղբայրներ Վլադիմիր Օնուֆրիևիչ և Ալեքսանդր Օնուֆրիևիչ Կովալևսկիները, ինչպես նշվեց, ժամանակին փոխեցին իրենց սկզբնական մասնագիտությունը և մեծ եռանդով տարվեցին բնական գիտություններով։ Բնագիտությունը նրանց գրավեց իր ռևոլուցիոն մատերիալիստական էությամբ, առաջադեմ էվոլյուցիոն ուսմունքով. երկուսն էլ խիստ ազդված էին Դարվինի ուսմունքով։ Ժամանակակից մի շարք ականավոր բիոլոգների՝ Ի. Մ. Սեչենովի, Կ. Ա. Տիմիրյազևի, Ի. Ի. Մեչնիկովի նման. նախկին իրավագետ, բայց բնագետ դառնալու ուղու վրա անցած Վլադիմիր Կովալևսկին էլ, իր եղբոր նման անվերապահորեն գարձավ ոչ միայն համոզված դարվինիստ, այլև հետագայում անմիջական կապ հաստատեց Չարլզ Դարվինի հետ։ Կազմավորվելով որպես բիոլոգ-պալեոնտոլոգ, նա, լիովին հենվելով դարվինիզմի հիմունքների վրա, իր մասնագիտությամբ ևս հաստատուն հիմքեր կառուցեց դարվինիզմի համար, զարգացրեց նրան։ Լ. Շ. Դավիտաշվիլին կանգ է առնում նաև Վ. Կովալևսկու չափազանց հետաքրքրական անձնական կյանքի մի էջի վրա։ 1868 թվականին Վ. Օ. Կովալևսկին ծանոթանում, ապա մտերմանում է Սոֆիա Վասիլևնա Կորվին— Կրուկովսկայայի հետ, որն ուներ բացառիկ մաթեմատիկական ընդունակություններ և մեծ ձգտում բարձրագույն կրթություն ստանալու, մի բան, որ անհնարին էր կանանց համար Ռուսաստանում։ Ծնողների խնամակալությունից դուրս գալու և արտասահման գնալու համար նա ֆիկտիվ ամուսնանում է Վլադիմիր Կովալևսկու հետ (հետագայում այդ ամուսնությունը վերածվում է իսկականի)։[1] Վ. Կովալևսկին իր անձնագրում, խիստ հոգա-

[1] Վ. Կովալևսկու կերպարը լրիվ պատկերացնելու համար չի կարելի չհիշատակել նրա կյանքի այդ ուշագրավ էջը։ Այդ մասին բավական մանրամասն գրում է Լ. Շ. Դավիտաշվիլին։ Վ. Կովալևսկու նամակներում իր եղբորը՝ մանրամասն գրեսորում է «յուր օրինակ» ֆիկտիվ ամուսնության ամբողջ պատմությունը։ Պետք է ասել, որ այդ ժամանակ Ռուսաստանում նիհիլիստական շրջաններում ընդունված էր ֆիկտիվ ամուսնությունը, որով երիտասարդ կինը հնարավորություն էր ստեղծում ազատվելու ծնողների արգելքներից ու կապանքներից, ապա որպես «ամուսնացած» կին գնալ արտասահման ուսանելու։ Այդպես վարվեց Սոֆիա Կովալևսկայան։ Նրա հետ արտասահման գնաց նաև մեծ քույրը՝ Անյան, որը Հրանսիայում ամուսնացավ Փարիզյան կոմունայի գործիչներից մեկի՝ Ժակլարի հետ և ամուսնու հետ միասին մասնակցեց Փարիզյան կոմունայի շարժմանը։

տար, նյութական զոհողություններին հետ կապված ջերմ վերաբերմունքով քիչ չնպաստեց իր տաղանդավոր կնոջ առաջադիմելուն և դառնալու համաշխարհային առաջին կին դիտնական-մաթեմատիկոսը։

Վլադիմիր Կովալևսկին և Սոֆիա Կովալևսկայան 1868 թվականին գնում են արտասահման, աշխատում նշանավոր դիտնականների մոտ, Սոֆիա Կովալևսկայան դառնում է տաղանդավոր դիտնական-մաթեմատիկոս, Ստոկհոլմի համալսարանի պրոֆեսոր, արժանանում է մի դիտական աշխատության համար փարիզյան ակադեմիայի, հակառակ հայտարարված չափի, կրկնապատիկված նյութական պարգևատրման, ընտրվում է ռուսական Դիտությունների Ակադեմիայի անդամ-թղթակից, սակայն առանց իրավունք ստանալու հայրենիքում աշխատելու կին լինելու պատճառով։ Վ. Կովալևսկին դառնում է նույնպես համաշխարհային անուն վայելող դիտական՝ էվոլուցիոն պալեոնտոլոգիայի հիմնադիր։

Իհարկե, Վ. Կովալևսկու ձեռք բերած տեսական բնագիտական գիտելիքները չէին բավարարում նրան, անհրաժեշտ էր լուրջ գործնական ուսուցում. այդ նրան հաջողվում է իրագործել արտասահմանում սիստեմատիկ աշխատանքով՝ լսելով նշանավոր դիտնականների լեկցիաներ, աշխատելով նրանց լաբորատորիաներում, թանգարաններում, բազմաթիվ մասնագետների հետ կապեր հաստատելով։ Լինում է գեոլոգ պալեոնտոլոգ Ֆրաասի թանգարանում Շտուտգարդում, այցելում հարավային Գերմանիայի, ապա Ֆրանսիայի բազմաթները, գնում Լոնդոն, հատկապես տեսակցություն ունենում Հեքսլիի, մանավանդ Դարվինի հետ (նույնիսկ որպես հյուր ապրում Դարվինի մոտ, Դաունում), որը, Վ. Կովալևսկու արտահայտությամբ՝ «բաց արեց նրա առաջ Անգլիայում բոլոր ճանապարհները և մատչելի դարձրեց նրա համար բոլոր դրադարանները և կոլեկցիաները։

«Ստեղծագործական գիտական աշխատանքի ժամանակաշրջանը» գլխում Լ. Ն. Դավիտաշվիլին մանրամասն խոսում է Վ. Կովալևսկու գիտական հետազոտությունների մասին։ 1871 թվականի մարտի 11-ին Վ. Կովալևսկին Ենայի համալսարանում պաշտպանում է դոկտորական դիսերտացիա հետևյալ թեմայով՝ «Anchitherium aurelianense Cuv. և ձիերի պալեոնտոլոգիական պատմության մասին»։ Միաժամանակ նա աշխատում է առհասարակ սմբակավորների պալեոնտոլոգիական պատմության պրոբլեմներով և ոչ պակաս արժեքավոր աշխատություններ է գրում այդ ուղղությամբ։ Կ. Ա. Տիմիրյազևը իր հուշերում Դարվինին Դաունում այցելելու առթիվ, գրում է, որ Դարվինը մեծ գովասանքով է արտահայտվել Վ. Կովալևսկու աշխատությունների բարձր արժեքի մասին։[1]

Մեծ հետաքրքրությամբ կարդացվում է Լ. Ն. Դավիտաշվիլու գրքի 4-րդ գլուխը՝ «Վլադիմիր Կովալևսկին—Չարլզ Դարվինի աշակերտ» վերնագրով։ այստեղ դրսևորվում են Վլադիմիր Կովալևսկու և Չարլզ Դարվինի սերտ բարեկամական հարաբերությունները։ Այդ կապը ստեղծվել է ոչ միայն նրանով, որ Վ. Կովալևսկին թարգմանել և հրատարակել է Դարվինի գրքերից մեկը, այլ բխում էր նրանից, որ ռուս առաջադեմ բնագետը անվերապահորեն ընդունել էր դարվինիզմը և զարգացրել, նոր հիմքեր ստեղծել դարվինիզմի համար իր մասնագիտության— պալեոնտոլոգիայի բնագավառում։

[1] К. А. Тимирязев—Сочинения, т. VII, изд. Сельхозгиз. 1939 г., стр. 562.

50-ական թվականների վերջերի հասարակական-քաղաքական այն իրադրությունները Ռուսաստանում, որում կազմավորվեցին ինչպես շատ ռուս ականավոր բնագետների, ապա և Վլադիմիր Կովալևսկու հայացքները, խիստ նպաստավոր էր մատերիալիստական գաղափարների, ապա ուրեմն, և դարվինիզմի՝ որպես մատերիալիստական ուսմունքի համար։ Պետք է նշել նաև, որ մոտեցումը Դարվինի ուսմունքին Ռուսաստանում առաջավոր գիտնականների կողմից ուներ յուրահատուկ, ավելի արմատական, պրոգրեսիվ արտահայտություն, քան Արևմտյան Եվրոպայում։ Այդ առթիվ հետաքրքրական են ռուս բնագետների և բժիշկների 7-րդ համագումարում Վ. Կովալևսկու արտասանած հետևյալ խոսքերը. «Դարվինի ուսմունքը առանձնակի համակրանքով ընդունված է մեզ մոտ Ռուսաստանում։ Մինչդեռ Արևմտյան Եվրոպայում սա հանդիպեց ամուր հաստատված հին տրադիցիաների, որոնց վիճակվեց նրան սկզբում հաղթահարել, մեզ մոտ նրա երևան գալը համընկավ մեր հասարակության զարթոնքի հետ Ղրիմի պատերազմից հետո, և միանգամից քաղաքացիական իրավունք ստացավ ինչպես գիտական, այնպես և հասարակական աշխարհում և մինչև այժմ վայելում է ընդհանուր համակրանք»։

Դարվինիզմը լիովին համապատասխանում էր Վ. Կովալևսկու աթեիստական և մատերիալիստական աշխարհայացքին։ 60-ական թվականների ռուսական դեմոկրատական ինտելիգենցիայի մատերիալիստական հայացքները անշուշտ մեծ չափով նպաստեցին այն բանին, որ Վ. Կովալևսկին, հակառակ արևմտա-եվրոպական իրոշորագույն էվոլյուցիոնիստ պալեոնտոլոգների (Ա. Գոդրի, Լ. Դյուտիմեյեր և ուրիշներ), լիովին մատերիալիստական դիրքերից յուրացրեց դարվինիզմը, դարձավ ավելի արմատական, համոզված դարվինիստ, քան նույնիսկ Դարվինի բարեկամ Թոմաս Հեքսլին։

Լ. Ն. Դավիտաշվիլին շատ ճիշտ նշում է, որ Վ. Կովալևսկու ուսուցիչը միայն Դարվինը չէր, այլ նաև՝ «նրա ուսուցիչները առաջավոր գիտության մեջ օրգանական աշխարհի զարգացման մասին եղել են մեծ ռուս էվոլյուցիոն-դեմոկրատ ականավոր գիտնականները և փիլիսոփաներ-մատերիալիստները։ Առանց դրանց նա չէր կարողանա դառնալ էվոլյուցիոն-դարվինյան պալեոնտոլոգիայի հիմնադիր» („Палеонтология лошадей" Լ. Ն. Դավիտաշվիլու ակնարկը. էջ 263)։

Մի կողմից Լ. Ն. Դավիտաշվիլու գրքի 10-րդ գլուխը («Վ. Օ. Կովալևսկու պալեոնտոլոգիական հետազոտությունները»), մյուս կողմից „Научное наследство"-ում գետեղված Վ. Օ. Կովալևսկու նեղբորը գրած համապատասխան նամակները, ապա և «Զիների պալեոնտոլոգիան» մոնոգրաֆիան լրիվ գաղափար են տալիս Վ. Օ. Կովալևսկու գիտական արագ աճի, նրա արժեքավոր աշխատությունների մասին և այն էվոլյուցիոն գրույթների, որոնցով զեկավարվում էր Վ. Կովալևսկին։ Դարվինի ուսմունքը կիրառելով պալեոնտոլոգիայում, նոր թարմ էվոլյուցիոն հիմքերի վրա դրեց այդ գիտությունը։ Մի խոսքով, տեսնում ենք, ինչպես նախկին իրավագետը կարճ ժամանակամիջոցում դառնում է այնպիսի լուրջ բնագետ-պալեոնտոլոգ, որի արժեքը ճանաչեցին նշանավոր օտարերկրյա բիոլոգ-պալեոնտոլոգներ և շատ բարձր գնահատեց Չարլզ Դարվինը։ Վ. Կովալևսկու նամակներին կցված է Լ. Ն. Դավիտաշվիլու ակնարկը, որտեղ նույնպես տրվում են կենսագրական տվյալներ։ Վ. Կովալևսկին 1868 թվին լծվելով բնական գիտության ուսուցման գործին, արդեն երեք տարի անց, 1872 թվի մարտի 11-ին Ենայի համալսարանում

պաշտպանում է դոկտորական դիսերտացիան։ Հաջորդ տարին նույն թեմայով գրում է ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով մի այլ աշխատություն։ 1873 և 1874 թ. թ. գերմաներեն տպագրվում է — «Anthracotherium» ցեղի մոնոգրաֆիա և փոքր բրածո սմբակավորների բնական կլասիֆիկացիայի» աշխատությունը։ 1873 թվականին Վ. Կովալևսկին գալով Օդեսա մտադիր էր պաշտպանել մագիստրական դիսերտացիա[1] Սակայն ռեակցիոն պրոֆեսորներից մեկը (Ի. Մ. Սինցով), որի աշխատությունների մասին մի ժամանակ Ա. Կովալևսկին բացասական կարծիք էր հայտնել, չմոռանալով այդ, տապալում է Վ. Կովալևսկուն գեոլոգիայի-պալեոնտոլոգիայի քննությունից։ Թեև Վ. Կովալևսկին ընկճված հեռանում է Օդեսայից, բայց չի դադարում իր աշխատանքները բրածո սմբակավորների վերաբերյալ։ Ըստ երևույթին 1873 թվին նրա ֆիկտիվ ամուսնությունը վերածվում է իսկականի. այժմ որպես իսկական ամուսին ստիպված էր առավել մեծ չափով մտածել նյութական ապահովության մասին։ 1875 թվականի մարտի 21-ին Պետերբուրգում պաշտպանում է մագիստրական դիսերտացիա. բայց և այնպես շնորհիվ պաշտոնական գիտության անբարյացակամ վերաբերմունքի, նրան չի հաջողվում ոչ համալսարանում, ոչ էլ Գիտությունների Ակադեմիայում ստանալ այնպիսի պաշտոն, որ կարողանար շարունակել թե գիտական աշխատանքները, և թե ապահովել իր ընտանիքը։ Ռեակցիոն գիտական շրջաններին դուր չէր գալիս Վ. Կովալևսկու կողմից պալեոնտոլոգիան նոր էվոլյուցիոն դրույթներով հագեցնելը։ Ճարահատյալ էլի զբաղվում է թարգմանական, հրատարակչական գործով, նույնիսկ գիտության հետ առնչություն չունեցող տնտեսական ձեռնարկումներով (նավթային գործի, տների շինարարության), հույս ունենալով այդպիսով ապահովել ընտանեկան տնտեսական վիճակը, մանավանդ իր տաղանդավոր կնոջ՝ Սոֆիա Կովալևսկայայի հանգիստ գիտական աշխատանքը։ Համաշխարհային անուն ստացած գիտնականը հազիվ 1880 թվ. դեկտեմբերին ընտրվում է Մոսկվայի համալսարանի դոցենտ. մեծ խոչընդոտներից հետո նա սկսում է կարդալ լեկցիաներ, բայց գիտական աշխատանքներին անձնատուր լինելու փորձերն ապարդյուն են անցնում։ Նա խճճվում է իր տնտեսական ձեռնարկումների հոգսերի մեջ. նյութական մեծ դժվարությունները ազդում են նրա հոգեկան դրության վրա այնքան ուժեղ, որ հասցնում են նրան 1883 թվականին ինքնասպանության։ Ցարական Ռուսաստանի ծանր պայմաններում, ռեակցիոն պաշտոնական գիտության անբարենպաստ մթնոլորտում Վ. Օ. Կովալևսկին չկարողացավ դիմանալ։ Սակայն նրա կարճատև, բայց խիստ բովանդակալից. արժեքավոր գիտական ժառանգությունը մեծ ներդրում էր համաշխարհային գիտության գանձարանում, նա առավել բարձրացրեց առաջավոր ռուսական գիտության նշանակությունը։

Նամակներից երևում է, թե որքան բարձր են գնահատել և մեծ հետաքրքրություն ցուցաբերել Վ. Օ. Կովալևսկու աշխատություններին ժամանակակից խոշորագույն պալեոնտոլոգները և գեոլոգները, ինչպես՝ Թ. Հիքսլին, Կ. Ցիտտել, Լ. Ռյուտիմեյեր, Է. Զյուս, Ա. Գոդրի, ապա և Չարլզ Դարվինը։ Իր մոնոգրաֆիան՝ «Անտրակոթերիումի մասին» Վ. Օ. Կովալևսկին ձոնել էր Դարվինին, որի համար վերջինս ջերմ խոսքերով շնորհակալություն է հայտնում տաղանդավոր հեղինակին։

---

[1] Վ. Կովալևսկին մտադիր էր [illegible] [illegible] մնալ Ռուսաստանում, այնտեղ բարձրագույն դպրոցում հիմնական աշխատանք ունենալու համար։

Վ. Օ. Կովալևսկու հետաքրքրական ընդարձակ նամակները իր եղբորը՝ Ալեքսանդր Օնուֆրիևիչին պատկերում են մեր առաջ Վ. Վ. Կովալևսկու բոլոր ջանքերը գիտական ուղղությամբ, միաժամանակ նշում այն սերտ մտերմական հարաբերությունները, որ գոյություն ունեին երկու նշանավոր եղբայրների միջև, դրսևորում են այն բարերար, խրախուսիչ ազդեցությունը, որ ունեցել է մեծ եղբայրը Վլադիմիր Օնուֆրիևիչի վրա, տեսնում ես, թե ինչպիսի ոգևորությամբ նա ղեկավարվել էր իր աշխատանքներում Դարվինի ուսմունքի դրույթներով։

Այսպես, օրինակ, հետաքրքրական է Լոնդոնից գրած նամակը (1871 թ. հոկտեմբերի 25-ի). «Ես զբաղվում եմ գեոլոգիայով կապված պալեոնտոլոգիայի հետ, առավելապես սմբակավորների և նույնիսկ առանձնապես կաթնասունների։ Ես կարգին գիտեմ և խեցիները, բայց առայժմ նրանց մի կողմ եմ դրել և նստել սմբակավորների վրա։ Միայն այստեղ մենք կարող ենք որևէ խելացի բան անել, արդեն, առաջինը՝ այն պատճառով, որ կենդանի ներկայացուցիչները լավ ծանոթ են և, բացի այդ, բրածո մնացորդները միշտ այնպիսին են, որ գաղափար են տալիս կառուցվածքի բարձրության մասին։ Բացի այդ, այստեղ գրավիչ է, ահա թե որ կողմը՝ կազմվածքի միասնությունը և դրա որոնումը բրածոների օգնությամբ, որոնք տալիս են մեզ չզարգացած (սկզբնական) և անցողիկ ձևեր։ Ներկայիս սմբակավորների և առանձնապես կաթնասունների աշխարհը ներկայացնում է այն աստիճանի անջատված օղակներ, որ ամեն մեկին ակամա դրդում է գտնել լիակատար ցիկլը, այսինքն, այն օղակները, որոնք անհետացել են։ «... պատկերացրու քեզ որևէ ռնգեղջյուրի, ձիու (Equus ընդհանրապես), խոզի։ Կարո՞ղ է լինել որևէ բան ավելի տարօրինակ, քան այդ. իսկ որտեղից նրանք հայտնվեցին, ինչպես առաջացավ այս կամ այն ձևը։ Հո չե՞ն ստեղծվել նրանք յուրաքանչյուրը aus allen stucken ինչպես նրանց մենք տեսնում ենք. մտածիր այնպիսի ձևի մասին, ինչպիսին է դետաձին, հո այդ խելացնորեն պարզ է, որ որտեղից հայտնվեց այդ գազանը, ինչպես նա հասավ այն ձևին, որպիսին մենք տեսնում ենք»։

Այս խոսքերից շատ պարզ երևում է, որ Վ. Օ. Կովալևսկին մտադիր չէր զբաղվել պալեոնտոլոգիայով լոկ որպես նկարագրական գիտություն, այլ նա մտադիր էր դուրս բերել պալեոնտոլոգիան քարացած վիճակից և դնել նոր ճանապարհի վրա. այս ուղղությամբ միայն այդ գիտությունը նա չէր մնա այլ բիոլոգիական գիտություններից, որոնք լուրջ հենակետեր են հանդիսանում դարվինիզմի համար։ Վ. Կովալևսկին փշրեց կաշկանդող կապանքները։ Ահա այդ առթիվ ինչ է գրում Վ. Օ. Կովալևսկին. «Ահա այս ամենը կոտ և մասամբ արդեն տալիս է մեզ խելացի պալեոնտոլոգիա դարվինիզմի հետ. մինչև այժմ նա գրականապես գոյություն չուներ» („Научное наследство", էջ 262)։

Վ. Օ. Կովալևսկին դարվինիզմի դրույթներով է մոտենում սմբակավոր կաթնասունների էվոլյուցիայի խնդրին և առանձնապես մանրամասն ուսումնասիրել է ձիերի նախահայրերի շարքը։ Փույթ չէ, որ Վ. Օ. Կովալևսկու գծած ուղին որոշ էտապներում փոփոխությունների ենթարկվեց հետագայում նոր բրածոների հայտնաբերմամբ. կարևորն այն փաստն է, որ շնորհիվ Վ. Օ. Կովալևսկու նոր, դարվինիստական լուսաբանությամբ պարզվեցին սմբակավորների, առանձնապես անզուգամատ սմբակավորների, մանավանդ ձիերի զարգացման որոշ էտապները. այդ արդեն խոշոր նվաճում էր և հիմքերից մեկն

էր էվոլյուցիոն պալեոնտոլոգիայի համար։ Վ. Օ. Կովալևսկին էվոլյուցիան պատկերացնում է որպես մի պրոցես, որի ընթացքում օրգանիզմը հարմարվում է միջավայրին բնական ընտրության հետևանքով։ Ձիերի նախահայրերի բազմաստամակ վերջավորությունների փոփոխությունները, որոշ ամրակների ռեդուկցիան, անհետացումը նա կապում է միջավայրի հետ, շեշտում միջավայրի փոփոխությունների դերն այդ պրոցեսում։ Ամրակավորների կմախքի պարզացումը, վերջավորությունների զարգացումը բխեցնում է էկոլոգիական պայմաններից։

Վ. Օ. Կովալևսկու նամակների ժողովածուին կցված ակնարկում, ապա և կենսագրական մոնոգրաֆիայում Լ. Շ. Դավիտաշվիլին կանգ է առնում և մի կարևոր հանգամանքի վրա։ Որոշ գիտնականների կողմից (թե արտասահմանյան, թե ռուսական) փորձեր են եղել Վ. Օ. Կովալևսկուն դուրս գբերել որպես կողմնակից Լամարկի ուսմունքի իդեալիստական դրույթների։ Այդ անելու առիթ տվել Վ. Օ. Կովալևսկու կողմից, ինչպես շատ հաճախ ասում է Լ. Շ. Դավիտաշվիլին, փոխաբերական մտքով գործածված մի քանի անտրոպոմորֆիստական արտահայտությունները, ինչպես օրինակ՝ «կենդանիների ձգտումը հասնելու միևնույն նպատակին», «ցանկալի իդեալին» հասնելը և այլն։ Լ. Շ. Դավիտաշվիլին արդարացի անհիմն է համարում մի շարք գիտնականների (Կ. Ցիտել, Ռ. Գյորնես, Է. Կոկեն, Օ. Արել) պնդումներն այն մասին, թե Վ. Օ. Կովալևսկին էվոլյուցիան պատկերացնում է որպես նախորոշված պրոցես, համաձայն պսիխոլամարկիստական դրույթների։ Լ. Շ. Դավիտաշվիլին այսպես է ամփոփում իր կարծիքն այդ մասին. «Կովալևսկու աշխատություններում մենք չգտանք անգամ մի տեղ, որ տար մեզ իրավունք խոսելու նրա տրամադրվածության մասին ավտոգենեզի կամ «նեոլամարկիզմի» դեմ այլաձևության կողմը»։

Վ. Օ. Կովալևսկու երեք աշխատություններից ձիու պալեոնտոլոգիական պատմության վերաբերյալ երկուսը զետեղված է՝ «Ձիերի պալեոնտոլոգիա» մոնոգրաֆիկ ժողովածուում։ Այդ աշխատություններն են. 1. Anchitherium aurelianense Cuv. և ձիերի պալեոնտոլոգիական պատմության մասին. Anchitherium aurelianense Cuv. օստեոլոգիան, որպես ձևի, որ պարզարանում է ձիու տիպի (Equus) գենեալոգիան։ (վերջինս առաջին անգամ հրատարակվեց Կիևում, 1873 թվականին)։

Վ. Օ. Կովալևսկու վերոհիշյալ աշխատությունները պարզաբանում են նրա հետաքրքրած հիմնական պրոբլեմը— ամբակավորների, առանձնապես անզուգամատ ամբակավորների՝ ձիու էվոլյուցիան նախնական բազմամբակավոր ձևերից։ Գտնված բրածոների (կմախքային մասերի— վերջավորություններ, դանգեր, ատամներ) մանրակրկիտ ուսումնասիրությամբ Վ. Կովալևսկին մատավոր դծերով վերարտադրում է այն էտապները, որ անցել են նախնական ձևերը մինչև ձիու առաջանալը։ Ընդհանուր դծերով նշում է անզուգամատ ամբակավորների էվոլյուցիայի էտապները հետևյալ հետեղականությամբ. պալեոթերիում—անխիթերիում—հիպարիոն—ձևի։ Նա հիշատակում է նաև ամերիկացիների ուսումնասիրած Մերիհիպպուս և Պարահիպպուս ձևերը, բայց դրանց հավանական տեղը նշում է անխիթերիումի և հիպարիոնի միջև։ Իհարկե, Վ. Օ. Կովալևսկու աշխատություններում այժմյան տվյալների համեմատ կարելի է տեսնել արդեն հնացած կետեր. այդ առթիվ Լ. Շ. Դավիտաշվիլին ասում է. «Կովալևսկու ֆիլոգենետիկ կառուցումը շատ

բանով հնացել է, և այնուամենայնիվ, նրանք ունեն խոշոր նշանակություն մեր ժամանակվա գիտության համար։ Վ. Օ. Կովալևսկու արժանիքը այն է, որ նա լուրջ փաստերով նշագծեց ձիու ֆիլոգենեզի, էվոլյուցիոն զարգացման հիմնական էտապները, արդեն չափազանց մեծ գործ էր, որ նա հաստատեց բրածո ողնաշարավորների վրա մի շարք ձևերի էվոլյուցիան։ Ձիերի ֆիլոգենեզում խոշոր դեր են կատարել վերջավորությունների, գանգի ձևի, ատամների ձևի փոփոխությունները։ Մանրակրկիտ կերպով Վ. Օ. Կովալևսկին հետազոտում և նկարագրում է այդ փոփոխությունները, վերլուծում նրանց հարմարողական էությունը, դրսևորում, թե ինչպես են բնական ընտրությամբ առաջացել ոսկրային փոփոխությունները, այլ կերպ ասած, նոր դրույթներով, դարվինիզմի դիրքերից է մոտեցել հարցերի վերլուծմանը։ Նա վերլուծում է փոփոխությունների պատճառները, ոսկրների կազմության առանձնահատկությունները կապում է ֆունկցիայի հետ, շրջապատող միջավայրի փոփոխվող պայմանների հետ։ Իր մանրակրկիտ ուսումնասիրությունների մասին տարբեր ժամանակ նա մանրամասն գրում է իր եղբորը՝ Ալեքսանդր Օնուֆրիևիչին։ Նրա աշխատությունները ցույց են տալիս, թե ինչպես նա ղեկավար դիրք էր ընդունել Դարվինի ուսմունքի դրույթները, դրանց հիման վրա կարողացել գիտնականների ուշադրությունը գրավել ոսկրների այնպիսի աննշան առանձնահատկությունների վրա, որոնք անուշադրության էին մատնված ժամանակակից, նույնիսկ ականավոր պալեոնտոլոգների կողմից, քանի որ նրանք տրամադիր չէին լիովին դարվինիզմը ներթափանցելու պալեոնտոլոգիայի բնագավառը։ Վ. Օ. Կովալևսկին, ընդհակառակը, համոզված, ջերմ հետևող լինելով դարվինիզմին, կարողացավ իմաստավորել կմախքային մասերի բազմատեսակ փոփոխությունները, լուսաբանել նրանց պատճառները։ Բերենք մի նմուշ նրա աշխատությունից. «Բայց անցումը դեպի հիպպարիոնը, ակնհայտորեն զուգակցվել էր սննդի մեծ փոփոխությամբ, մի կենդանուց, որ սնվում էր գետերի ափերը ծածկող տերևներով և հյութալից բույսերի ճյուղերով (ինչպես այժմ էլ այդպես անում են տապիրները և անտարակույս արել են էոցենյան պալեոթերիումները և առավել թույլ չափով անխիթերիումները) սկսեց զարգանալ, մայր ցամաքների և մարգագետնային տափաստանների զարգացմամբ, առավելապես տափաստանային, բացառապես խոտակեր կենդանին։ Իսկ սննդի փոփոխմամբ պետք է փոփոխվեր և ատամնային ապարատը, և մենք իսկապես տեսնում ենք, որ հիպպարիոնի մոտ արդեն զարգանում է բարձր պրիզմատիկ ատամ, որի բարձրությունը 4 անգամ գերազանցում է անխիթերիումի ատամից»[1]

Ձիերի պալեոնտոլոգիական պատմության վերաբերյալ Վ. Օ. Կովալևսկու կլասիկ աշխատությունը հիմք դրեց էվոլյուցիոն պալեոնտոլոգիային։ Այդ արդեն ընդունված փաստ է բոլոր առաջավոր բիոլոգ-պալեոնտոլոգների կողմից։

Ոչ միայն գեոլոգ-պալեոնտոլոգը, այլև ամեն մի բիոլոգ-դարվինիստ չի կարող անտեսել Վ. Օ. Կովալևսկու խոշորագույն ներդրումը, միևնույն ժամանակ չի կարելի դիտել ռուս ականավոր բիոլոգ-պալեոնտոլոգի մեծ գործը անկախ այն շրջապատից, այն սոցիալ-քաղաքական իրադրությունից, որում աճել, զարգացել է Վ. Օ. Կովալևսկին։ Նրա բազմաթիվ բովանդակալից, բազմապիսի հետաքրքրական կենսագրական և գիտական փաստերով հագեցած

---

[1] В. О. Ковалевский—Палеонтология лошадей, стр. 226.

նամակները դրսևորում են նրա կյանքը, գործունեությունը, հասարակական կերպարը, համաշխարհային գիտական նշանակությունը։

Արժեքավոր են ՍՍՌՄ-ի Գիտությունների Ակադեմիայի հրատարակած մեր քննարկած երեք նյութերն էլ։ Բոլոր դեպքերում հետաքրքրական են Լ. Շ. Դավիտաշվիլու ուսումնասիրությունները, ակնարկները, նվիրված Վ. Օ. Կովալևսկու կյանքին ու գործունեությանը։ Ինչպես նշում է Լ. Շ. Դավիտաշվիլին, դեռ լրիվ ուսումնասիրված չէ ռուս մեծ գիտնականի գիտական ժառանգությունը (մանավանդ գեոլոգիայի բնագավառում)։ Դրան մենք կավելացնենք նաև այն, որ չափազանց հետաքրքրական է ավելի մանրամասն ուսումնասիրել Վ. Օ. Կովալևսկու հասարակական գործունեությունը, նրա կապերը ռևոլյուցիոն-դեմոկրատական խմբակների հետ (մանավա՛նդ սիբիրական շրջանում), մասնակցությունը լեհական ապստամբությանը, գործունեությունը իտալական ազատագրական շարժման հերոս Գարիբալդիի գլխավոր շտաբում, ապա և Փարիզյան կոմունայի ժամանակաշրջանի իրադարձությունները՝ կապված Վ. Օ. Կովալևսկու և Փարիզյան կոմունայի գործիչ Ժակլարի ընտանիքների հարաբերությունների հետ։ Անհրաժեշտ է տպագրել Վ. Օ. Կովալևսկու լիակատար նամակագրությունը (թե՛ իր և թե՛ նրան գրած նամակների, մանավանդ հայրենի և արտասահմանյան նշանավոր գիտնականների հետ ունեցած նամակագրությունը), ապա և բոլոր այն նյութերը, որոնք առնչություն ունեն Վ. Օ. Կովալևսկու և Չարլզ Դարվինի մտերմական հարաբերությունների հետ։

Նյութի վերաբերյալ անշուշտ շատ բան կարող է անել Լ. Շ. Դավիտաշվիլին, ապա և պատմաբան Շտրայխը, որը նույնպես ուսումնասիրել է երեք Կովալևսկիների (Վլադիմիր Օնուֆրիևիչի, Ալեքսանդր Օնուֆրիևիչի, Սոֆիա Կովալևսկայայի) կյանքը։[1]

Ստացվել է 25/V 1950

Գրականություն Վ. Օ. Կովալևսկու մասին

1. *Л. А. Борисяк*—В. О. Ковалевский, его жизнь и научные труды. изд. Ак. Наук СССР, Л. 1928.
2. *Люди русской науки*—Том 1, стр. 399.
3. *С. Я. Штрайх*—Из переписки братьев Ковалевских. „Советская наука" № 7. стр. 49—120.
4. *С. Я. Штрайх*—Гениальный русский палеонтолог В. О. Ковалевский, „Успехи современной биологии" том 16, вып. 1, стр. 87—102.
5. *Л. Ш. Давиташвили*—История эволюционной палеонтологии от Дарвина до наших дней. Главы VII—IX. 1948. изд. Академии Наук СССР.

[1] *Երեք Կովալևսկիների կյանքի ու գործունեության վերաբերյալ շատ հետաքրքրական պատմական վեպ է գրել պատմաբան Շտրայխը հետևյալ վերնագրով.* „Семья Ковалевских". изд. Советский писатель, Москва, 1948 г.